ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմեն Սերգոյի Հայրապետյանը ծնվել է 1978 թվականի փետրվարի 10-ին, Լենինականում, ծառայողի ընտանիքում: 1985 թվականին ընդունվել և 1995 թվականին ավարտել է Գյումրու Ակադեմիական վարժարանը, ապա ընդունվել Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետի պատմության բաժինը, որն էլ 2000 թվականին ավարտել է գերազանցության դիպլոմով: 2000 թվականի հոկտեմբերին Ա. Հայրապետյանն ընդունվել է նույն ինստիտուտի նպատակային ասպիրանտուրան /արտաքրությունից կտրված/՝ «Հայոց պատմություն» մասնագիտության գծով: 2003 թվականի սեպտեմբերի 30-ին Ա. Հայրապետյանը ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում պաշտպանել է «Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին /պատմաժողովրդագրական ուսումնասիրություն/» թեմայով թեկնածուական ատենախոսություն և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2006 թվականի դեկտեմբերից՝ ՀՀ ԲՈՀ-ի որոշմամբ՝ դոցենտի գիտամանկավարժական կոչում:

Արմեն Հայրապետյանը հեղինակ է երկու մենագրությունների և մոտ երեք տասնյակ գիտական հոդվածների, որոնցում արծարծվել են հայ ժողովրդի նոր շրջանի պատմության մի շարք հիմնախնդիրներ, ինչպես նաև բազմիցս գիտական զեկուցումներով հանդես է եկել հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

2003 թվականից Արմեն Հայրապետյանը ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի և ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող է և զբաղվում է Ալեքսանդրապոլի գավառի XIX դարի երկրորդ կեսի XX դարի առաջին քառորդի պատմաժողովրդագրական բազմակողմանի գիտական հետազոտությամբ: Գիտական գործունեությանը զուգահեռ Հայրապետյանը տանում է նաև մանկավարժական աշխատանք. Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության և իրավագիտության ամբիոնի դասախոս է: Ա. Հայրապետյանը ամուսնացած է, ունի երկու երեխա՝ դուստր /ութ տարեկան/ և որդի /չորս տարեկան/:

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայրապետյան Ա., Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին /պատմաժողովրդագրական ուսումնասիրություն/, Գյումրի, 2005, 201 էջ:
2. Ծրագիր «Հայոց պատմություն» բուհական միջֆակուլտետային դասընթացի, կազմեց՝ Ա. Հայրապետյանը, Գյումրու «Իմաստասեր Ան. Շիրակացի» համալսարան, Գյումրի, 2009, 38 էջ:
3. Հայրապետյան Ա., Կումայրի-Գյումրի-Ալեքսանդրապոլը XIII-XIXդդ., հասարակական-քաղաքական կյանքը, ժողովրդագրությունը, Գյումրի. Քաղաքը և մարդիկ, (հեղինակային կոլեկտիվ), Գյումրի, 2009, 3 մամուլ:
4. Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում /XIXդ.-XXդ. սկիզբ/, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, աշխատասիրությամբ Ա. Հայրապետյանի, Եր., 2011, 270 էջ:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Հայրապետյան Ա., Էրիախի-Շիրակը ուրարտական արձանագրություններում, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 3, Գյումրի, 2000, էջ 186-189:
2. Հայրապետյան Ա., Գրահիրատարակչությունը և պարբերական մամուլը Ալեքսանդրապոլում, ՇՊՄԺ հանրապետական IV գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2000, էջ 32-33:

3. Հայրապետյան Ա., Գյումրի-Ալեքսանդրապոլը XIX դարի առաջին կեսին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 4, Գյումրի, 2001, էջ 108-115:
4. Հայրապետյան Ա., Արևմտահայ գաղթականության տեղաբաշխումը Շորագյալի գավառում /Արևելյան Շիրակ/ 1829-1831թթ., ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 5, Գյումրի, 2002, էջ 153-168:
5. Հայրապետյան Ա., Արևելյան Շիրակն Անդրկովկասի վարչատարածքային բաժանումների համակարգում /XIX դար/, «Հայոց պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածու, հ. 3, Եր., 2002, էջ 56-60:
6. Հայրապետյան Ա., Կումայրի-Գյումրին գյուղ, թե քաղաք, ՇՊՄԺ հանրապետական V գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2002, էջ 15-16:
7. Հայրապետյան Ա., Էթնո-ժողովրդագրական և կրոնադավանաբանական իրավիճակը Ալեքսանդրապոլի գավառում /1840-1850-ական թթ./, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 6, Գյումրի, 2003, էջ 72-81:
8. Հայրապետյան Ա., Ժողովրդագրական իրավիճակը Շորագյալի գավառում 1820-1830-ական թթ., ՀՀ ԳԱԱ ՊԻ «Հայաստանի պատմական ժողովրդագրության հիմնահարցեր», Եր., 2004, էջ 52-54:
9. Հայրապետյան Ա., Գյումրի-Ալեքսանդրապոլի էթնո-ժողովրդագրական և կրոնադավանաբանական պատկերը XIX դարի առաջին կեսին, ՇՊՄԺ հանրապետական VI գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2004, էջ 46-48:
10. Հայրապետյան Ա., 1828-1829թթ. գաղթած պարսկահայերի թվաքանակի շուրջ, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 7, Գյումրի, 2004, էջ 31-36:
11. Հայրապետյան Ա., Ժողովրդագրական գործընթացներն Արևելյան Շիրակում XIXդ. առաջին քառորդին, Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2005, էջ 75-82:
12. Հայրապետյան Ա., Արխիվային փաստաթղթերը Ալեքսանդրապոլի գավառի XIXդ. 50-60-ական թվականների ժողովրդագրության մասին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 8, Գյումրի, 2005, էջ 138-146:

13. Հայրապետյան Ա., Գյումրի-Ալեքսանդրապոլի անցյալից, Համայնապատկեր, Գրական-մշակութային հանդես, թիվ 34, Լոս Անջելես, 2005, էջ 22:
14. Հայրապետյան Ա., Արխիվային փաստաթղթերը Ալեքսանդրապոլի գավառի XIXդ. 70-ական թվականների ժողովրդագրության մասին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 9, Գյումրի, 2006, էջ 153-167:
15. Հայրապետյան Ա., Ալեքսանդրապոլի տնտեսական կյանքը XIXդ. 50-70-ական թթ., «Հայոց պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածու, հ. 8, Եր., 2006, էջ 161-170 :
16. Հայրապետյան Ա., Ցարական կառավարության քաղաքային ռեֆորմները XIXդ. երկրորդ կեսին և Ալեքսանդրապոլը, ԳՊՄԻ տարեկան հանրապետական գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2006, էջ 42-50:
17. Հայրապետյան Ա., Արևելյան Շիրակի վարչաքաղաքական իրավիճակը XVI-XVIIIդդ., ՇՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, էջ 91-97:
18. Հայրապետյան Ա., Նոր վավերագրեր Ալեքսանդրապոլի գավառի XIXդ. 60-ական թվականների ժողովրդագրական դրության մասին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 10, Գյումրի, 2007, էջ 139-154:
19. Հայրապետյան Ա., Ժողովրդագրական գործընթացները Փամբակի գավառակում XIXդ. առաջին կեսում, «Հայոց պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածու, հ. 9, Եր., 2008, էջ 124-137:
20. Հայրապետյան Ա., Գյումրի-Ալեքսանդրապոլի էթնոժողովրդագրական պատկերը XIXդ. և XXդ. Առաջին քառորդին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 11, Գյումրի, 2008, էջ 27-34:
21. Հայրապետյան Ա., Ժողովրդագրական գործընթացները Գյումրի-Ալեքսանդրապոլում /XIX դար/, «Հայոց պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածու, հ. 10, Եր., 2009, էջ 145-157:
22. Հայրապետյան Ա., Համահարակային հիվանդություններն Ալեքսանդրապոլի գավառում /XIX-XXդդ./, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 12, Գյումրի, 2009, էջ 116-123:
23. Հայրապետյան Ա., Ալեքսանդրապոլի գավառը Արևելյան Հայաստանի XXդ. Առաջին քառորդի վարչատարածքային բաժանումների համակարգում, «Հայոց

պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածու, հ. 11, Եր., 2010, էջ 197-209:
24. Հայրապետյան Ա., Ռուս վերաբնակները Ալեքսանդրապոլի գավառում, ՇՊՄԺ միջազգային VIII գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2010, էջ 86-97:
25. Հայրապետյան Ա.,Արևմտահայ գաղթականության տեղաբաշխումը Փամբակի գավառում 1829-1831թթ., ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 13, Գյումրի, 2010, էջ 125-134:
26. Հայրապետյան Ա., Ալեքսանդրապոլի գավառը XIXդ. առաջին կեսի Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական գործընթացների համատեքստում, «Պատմաբանասիրական հանդես», հ. 2, Եր., 2011, էջ 162-169: